№ 233 Դեկտեմբերի 30 1880 Դեկտեմբերի 30 № 233

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

# „ՄՇԱԿ"

## ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

## 1881 թ-ին

## (ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինն տարի անցաւ։— Ներքին տեսութիւն։ Նամակ Բագուից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քաղաքական տեսութիւն։ «Daily News» լրագրի յօդուածը։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Դաւիթ բէկ։

### ԻՆՆ ՏԱՐԻ ԱՆՑԱԻ

„Մշակը" սկսելու է շուտով իր գոյութեան տասներորդ տարին։

Հայոց հասարակութիւնը բաւական ծանօթացաւ արդէն „Մշակի" ուղղութեան հետ։ Ինն տարի շարունակ մենք աշխատած ենք քանդել վատը և հինը և առաջարկել հային նոր հասարակական իդէալները։

Այս կը լինի ներկայ 1880 թուի մեր վերջին համարը։ Եկող տարին մենք կը շարունակենք գործել նոյն ուղղութեամբ, որով գործում էինք ինն տարի շարունակ, առանց շեղվելու մեր մի անգամ գծագրված պրոգրամմայից։

Մենք ունեցել ենք միշտ մեր աչքի առջև ընդհանրութեան շահը, առանց հետևելու անձնական որ և է շահերին, մենք յարձակվել ենք միշտ ընդհանուրի պակասութեան վրա, առանց դիպչելու անձնական պակասութիւններին, անձնական այս կամ այն կեանքին։

Մամուլը չը պէտք է լինի անձնական զգացմունքների արտայայտիչ, չը պէտք է դառնայ անձնական կրքերի նեղ և զզուելի ասպարէզ, այլ պէտք է յայտնի հասարակութեան և ընդհանուր մարդկութեան շահերին ծառայէ։

Որքան մի լրագրի հայեացքները կը լինեն լայն, ընդհանուր, ընդարձակ,—այնքան այդ լրագիրը մեծ ծառայութիւն արած կը լինի այն ազգին, այն հասարակութեանը, որի լեզուով հրատարակվում է, այնքան էլ մեծ ծառայութիւն արած կը լինի ընդհանուր մարդկութեանը, առաջ մղելով լուսաւորութեան և առաջադիմութեան ճանապարհի վրա ընդհանուր մարդկութեան անդամ կազմող հայրենի հասարակութիւնը։

Մեր ուղեցոյցը մեր ամեն յարուցած հարցերի մէջ եղել է միշտ արդարութիւն, անկողմնա-

---

# ԴԱՒԻԹ ԲԷԿ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

—Այդ բանից վատ հոտ է գալիս... ասաց մէլիք Ֆրանգիւլը, դառնալով մէլիք Դաւիթին, երբ նրանց աչքին ընկաւ սոսկալի տեսարանը։

Մէլիք Դաւիթը ոչինչ չը պատասխանեց։ Նա մտածում էր այն բանի վրա, թէ ինչ տպաւորութիւն կունենայ այդ անցքը խանի վրա։ Նա պատրաստում էր պատասխան նրա համար։ Իր մտքում հարիւրաւոր պատճառներ էր հնարում, հարիւրաւոր փաստեր էր ստեղծում իրան արդարացնելու համար, երբ խանը բացատրութիւն կը պահանջէր նրանից սարսափելի անցքի մասին։ Իսկ մէլիք Ֆրանգիւլին տանջում էր մի այլ միտք։ Նա երկիւղ ունէր, որ գիւղացիների ինքնասպանութիւնը դուցէ կը շարժէր խանի մարդասիրական զգացմունքը և դրանով կը դժուարանար իրանց դիտաւորութիւնը հայ գերիների վաճառումը կամ խպտառ խափանելու, կամ յետաձգելու մասին։ Այդ նպատակով նրանք դիմում էին խանին, որ արգելեն հայ գերիների վաճառումը, և Թորոս իշխանին ձեռնթափ յետ դարձնեն, որը այսօր գալու էր գերիներին գնելու։ Իսկ այդ անիծված գիւղացիները վատ ժամանակ ընտրեցին իրանց այրելու։ Այսօր պէտք էր խանի անդթութիւնը իր գագանային բորբոքման մէջ պահել։ Իսկ այդ անիծված գիւղացիները փոքր ինչ մեղմացրին նրա բարբարոսութիւնը։ Ո՞ւմ սիրտը չի ցաւի, տեսնելով երեխաներին և կնիկներին կրակի բոցերի մէջ... Այսպէս էր մտածում մէլիք Ֆրանգիւլը, երբ նրանք հասան խանի վրանի մօտ։

Խանը դեռ կանգնած էր իր վրանի առջև և նայում էր, թէ որպէս մի քանի հրէաներ երկաթէ կարթերով, շան գէշերի նման, քարշ էին տալիս կիսախորով դիակները, տանում էին հեռու, ձգում էին մի փոսի մէջ և ծածկում էին հողով։ Մահմեդականները չէին մօտենում նրանց, պիղծ էին համարում, այս պատճառով պիղծ ծառայութիւնը յանձնել էին նոյնպէս պիղծ հրէաներին, որոնք գործով եկել էին խանի բանակը։

Ցեռնելով երկու մէլիքներին, որոնք հանդիսաւոր կերպով իր մօտ էին գալիս, խանը մի առանձին հեգնական ժպիտով դարձաւ նրանց, ասելով.

—Տեսնք, ինչ արեցին այդ յիմար հայերը...

Երկու մէլիքները մինչև գետին խոնարհվելով, գլուխ տուեցին։ Խանի ժպիտը քաջալերեց նրանց, և մէլիք Դաւիթը օգուտ քաղելով նրա ուրախ տրամադրութիւնից, պատասխանեց.

—Հային ո՞վ է տուել խելք, եթէ հայերը խելք ունենային, էլ ինչու էին հայ լինում...

«Ուրացողի» չողոքորթութիւնը բաւական դիւր եկաւ խանին, որը ձեռքը դնելով նրա ուսի վրա, ասաց.

—Այդ իրաւ է, Բաղր բէկ (պարսիկները այսպէս էին կոչում նրան)—եթէ հայերը խելք ունենային, կը հետևէին քո օրինակին, կընդունէին մեր սուրբը կրօնքը, և համ այս աշխարհում, համ այն աշխարհում վայելչութիւն կունենային։— Այսպէս չէ՞, մէլիք Ֆրանգիւլ, հարցրեց նա վերջինից։

Մէլիք Ֆրանգիւլը դարձեալ գլուխ տուեց, ասելով.

—Այո՛, խան, այդպէս է, քո ոտքին մատաղ։

Խանը մտաւ վրանի այն մասը, որ յատկացրած էր դիւանի համար։ Նա նստաւ իր համար առանձին պատրաստած թանգագին օթոցի վրա և հրաւիրեց երկու մէլիքներին նոյնպէս նստել։ Նրանք տեղաւորվեցան խանից ցած։ Խանի դրանիկներից նրա մօտ նստեց միայն մունչի-բաշին, իսկ միւսները ոտքի վրա կանգնած մնացին վրանի առջև։ Այդ միջոցին անցաւ այնտեղից ծերունի Ահմէդը, և հեռուից լուռ աչքով ակնարկելով խանի մանկահասակ սպասաւորներից մէկին, կանչեց իր մօտ։

—Սալամ, ասաց նրան,—ահա քեզ տասն ոսկի. այդ մարդիկը ինչ որ խօսելու լինեն խանի հետ, շուտով խաբարը կը բերես ինձ։ Նա ցոյց տուեց երկու մէլիքների վրա։

—Փողը ինչ կանեմ, պատասխանեց կանացի դէմքով գեղեցիկ սպասաւորը,—քեզ մի ծառայութիւն անելու համար ես ամեն բանի պատրաստ եմ։

—Ոչ, ընդունիր, ինչ որ քեզ ասում են՝ այն լսիր. ոչ մի խօսք չես փախցնի ականջիցդ, բոլորը կը պատմես ինձ։

Սալամը խանի համար ղէյլան մատուցանող սպասաւորն էր, որ միշտ կանգնած էր լինում նրա սպասին։ Նա առանց կաշտաք ևս ընդունելու ծերունի ներքինապետից, միշտ պատրաստ էր կատարելու հարեմի այդ հզօր իշխանի կամքը, որից բոլոր ծառայողները դողում էին։

Խառնիճաղանճ բազմութիւնը վրանի առջևից քաշվեցաւ դէպի նրա եռևի կողմերը, նստեցին խոտերի վրա, որ խանի աչքին չընկնեն։ Իսկ վրանի մուտքի աջ և ձախ կողմերը կանգնած մնացին ֆէրրաշները, չաթրները և միւս ծառայողները։

Խօսակցութիւնը կրկին դարձաւ հայերի վրա։

—Ֆարրաշ-բաշի, ձայն տուեց խանը,—դուք չը գիտէք պատճառը, թէ ինչու համար այդ հայերը իրանց այրեցին։

Ֆարրաշ-բաշին մօտեցաւ, գլուխ տուեց, և չփոթված տատանվում էր, չը գիտէր, թէ ինչ պէտք էր պատասխանել։ Վերջապէս ասաց նա, թէ ինձ ոչինչ յայտնի չէ։

—Ես գիտեմ... մէջ մտաւ մունչի բաշին, խանի առաջին քարտուղարը։

Այդ մարդը, որ ամբողջ մարմնով թունաւորված էր անդադար ափիոն ուտելով, որի ձեռքերը դողում էին շատ արագ խմելուց, բայց որպէս գրագէտ, որպէս շատ կարդացած մարդ, համեմատաբար աւելի բարոյական էր, քան թէ միւս բոլոր ծառայողները։ Նա պատկանում էր պարսից մի ծածուկ աղանդի, որ հերքում էր ամեն կրօնքները, իբրև ընասակար, իբրև ազգերի եղբայրութիւնը խափանող և նրանց մէջ թշնամութիւն սերմանող մի վարդապետութիւն։ Նա բացատրեց խանին, թէ հայերի յուսահատական ինքնասպանութիւնը առաջ է եկել հարկերի չափազանց ծանրութիւնից, թէ նրանք վճարում էին երեքպատիկ, չորեքպատիկ աւելի, քան թէ պարտաւոր էին. թէ նրանց ինչքը, ստացվածքը և մինչև անգամ զաւակները վաճառվում էին տուրքերի փոխարէն։— Ի հարկէ, այդ բոլորից յետոյ, աւելացրեց նա,—նրանց ոչինչ չէր մնում, բայց միայն մեռնել...

Այդ միջոցին մէլիք Դաւիթի դէմքը գունատվեցաւ, զալկացել, մեռելի գոյն էր ստացել։ Նրա աչքերում վառվում էր մի տեսակ գազանային կատաղութիւն, նկատելով, թէ դեռ ևս կան աշխարհում անմիտ մարդիկ, որոնք բողոքում են չարութեան դէմ։ Նա զսպեց իրան, ոչինչ չը պատասխանեց, սպասելով, թէ խանը ինչ կասէ։

—Հաշիւներ կան ձեզ մօտ, հարցրեց խանը։

—Ինչպէս չէ, պատասխանեց քարտուղարը և դուրս բերեց իր գօտիի միջից թղթերի ահագին փաթոթը, սկսեց նրանց միջից ջոկել տաթեացիների հաշիւները։

Այդ միջոցին խանի վրանը մտաւ ցեղի ընդհանուր հոգևոր գլուխը—իմամը։ Բոլորը ոտքի վրա կանգնեցին, նրան գլուխ տուեցին։ Խանը հրաւիրեց նրան իրանից բարձր նստել, նոյն թանգագին օթոցի վրա, ուր առաջ ինքն էր նստած։ Քննութիւնը հայերի հարստահարութեան մասին ընդհատվեցաւ։

Սովորական հարցուբարևներից յետոյ, խանը ծիծաղելով դարձաւ դէպի իմամը, ասաց.

—Ի՞նչ է շինում ձեր դերվիշը, պատրաստեց խոստացած մաջունը։

—Դեռ բոլոր նիւթերը ձեռք չեն բերված, պատասխանեց իմամը լուրջ կերպով.—հարկաւոր է դեռ ևս հարիւր մղալ մարգարիտ, հարիւր մղալ խաշոր մարջան, տասն մղալ ալմաստ, տասն մղալ եաղութ, տասն մղալ լալ, հինգ մղալ մուշք, հարիւր մղալ չուբի-չին, երկու հարիւր մղալ եալղուզի ոսկի, և մի քանի ուրիշ նիւթեր։ Այստեղ անկարելի է բոլորը գտնել, միտք ունեմ գրել Թարվէզ, որ այնտեղից ուղարկեն։

—Ամենևին հարկաւոր չէ գրել Թարվէզ, ասաց խանը իր ծառայութիւնը ցոյց տալու համար իմամին,—բոլորը կը գտնվեն ինձ մօտ, դուք կարող էք ստանալ ինձանից այդ բոլոր գոհարները, որքան պէտք է ձեզ, միայն այն պայմանով, որ փողի փոխարէն չնորհէք ինձ ձեր սուրբ օրհնութիւնը։

—Ես առանց այդ ևս ամեն օր իմ նամազների մէջ յիշում եմ ձեզ, ասաց իմամը իր յատուկ բարեսրտութեամբ։

Խանը լուռ գլուխ տուեց ի նշան իր շնորհակալութեան։

Իմամը վաթսուն տարին անցրած մի չոր ուցամաք ծերունի էր, ոտքից մինչև գլուխը սպիտակ հագնված, որպէս վայել էր այդ նրա բարեպաշտութեանը։ Նրա գլխի ճերմակ չալման մի ահագին կաղամբի էր նմանում, իսկ մէջքի հատ գօտին, փրփուրի պէս սպիտակ և նուրբ գործուածքից, դիզվել էր փորի վրա։ Նա տան և

*պահութիւն, մեր իդէալը, որին միշտ պարտաւորութիւն կը համարենք ձգտել, եղել է միշտ և կը լինի ազատութիւնը և մարդու անհատական զարգացումը։*

*Մեր թշնամի ոյժերը, որոնց դէմ միշտ կռուել ենք և միշտ կը կռուենք, եղել են՝ տգիտութիւն, նախապաշարմունք, խաւար, մոլեռանդութիւն, հալածանք, բռնաւորութիւն և ստրկութիւն։*

*Ինչ որ ,,Մշակը'' եղել է իր տարի շարունակ, նոյնը կը լինի նա և իր գոյութեան տասներորդ տարին, նոյնը կը լինի նա և քանի գոյութիւն կունենայ։*

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Դեկտեմբերի 10-ին

Յանկանալով օգնել մեր Վանի սովատանջ եղբայրներին, այստեղի բէալական ուսումնարանի աշակերտներից ժողովեցինք 79 բուբլ 60 կ., որը ուղարկելով, ընդ սմին, խնդրում ենք պատուելի խմբագրութեանդ հաստնել ուր հարկն է և տպել նուիրատուաց անունները։

Մ. Յարութիւնեանց 2 ր., Ջ. Յարութիւնեանց 1 ր., Մ. Ստեփանեան 2 ր., Վ. Վարշամեանց 1 ր., Ա. Նազարեանց 1 ր., Գ. Ղուկասեանց 5 ր., Ա. Աղամեանց 3 ր., Ա. Սաֆարեանց 2 ր., Կ. Վարշամեանց 1 ր., Կ. Տէր-Մարկոսեանց 1 ր., Գ. Տէր-Սարգսեանց 1 ր., Մ. Տէր-Գրիգորեանց 1 ր., Ա. Ղուլիեանց 1 ր. 20 կ., Ս. Շախնազարեանց 1 ր., Անյայտ ումն 1 ր., Գ. Երամիշեանց 1 ր., Ա. Կուզնեցեանց 1 ր., Լեւոնզեանց 1 ր., Թառաեանց 1 ր., Ն. Մելիքեանց 3 ր., Գ. Քալանթարեանց 50 կ., Ա. Բեհրամեանց 50 կ., Ա. Սերեբրակեանց 50 կ., Ե. Աֆշարեանց 50 կ., Տ. Ստեփանեանց 50 կ., Շահվերդեանց 50 կ., Բաբաեանց 50 կ., Յ. Բունիաթեանց 50 կ., Տէր-Օսէփեանց 50 կ., Յ. Պոպով 20 կ., Ի. Պոպով 1 ր., Լ. Ստեփանեանց 1 ր., Ի. Տէր-Սարգսեանց 50 կ., Կ. Աւետեանց 50 կ., Ա. Այվազեանց 1 ր., Լ. Մխիթարեանց 1 ր., Ա. Մաղաթեանց 50 կ., Պ. Վարշամեանց 1 ր., Յ. Մաիլեանց 50 կ., Թումանեանց 50 կ., Թումանեանց 50 կ., Գ. Գրիգորեանց 1 ր., Ս. Յովանէսեանց 40 կ., Ա. Ղուկասեանց 50 կ., Յ. Ծատուրեանց 1 ր., Ա. Ստեփանեանց 1 ր., Ջ. Ամիրխանեանց 2 ր., Լ. Լալաեանց 1 ր., Ա. Լալաեանց 50 կ., Յ. Մաղաթեանց 1 ր., Տ. Ներսէսեանց 1 ր., Լ. Ղուկասեանց 50 կ., Յ. Ադամեանց 1 ր., Ն. Ղասարեանց 1 ր., Յ. Կուրցեվ 1 ր., Մելիք-Դադաեանց 1 ր. 50 կ., Ն. Թառաեանց 1 ր., Քալանթարեանց 3 ր., Ղ. Յովսէփեանց 1 ր., Յ. Ադամջանեանց 1 ր., Լ. Մեհրապեանց 50 կ., Ս. Գէորգեանց 1 ր., Մ. Ղուկասեանց 50 կ., Տէր-Յակոբեանց 1 ր., Յ. Գրիգորեանց 1 ր., Ն. Թումանեանց 1 ր., Բուդաղեանց 1 ր., Լ. Ղասարեանց 1 ր., Ր. Շահնազարեանց 1 ր., Մինասեանց 50 կ., Մ. Շահնազարեանց 50 կ., Մ. Պոպովեանց 1 ր., Ն. Ադամջանեանց 40 կ., Ն. Թարոսեանց 1 ր., Անյայտ ումն 1 ր., Ա. Շահնազարեանց 50 կ., Ս. Սերգեանց 50 կ., Գ. Ստեփանեանց 40 կ., Ջ. Մելիք-Դադաեանց 50 կ.։ Ընդամենը 79 ր. 60 կ., դուրս եկած փոստի ծախսը—ընդամենը 79 ր.։

Մ. Յարութիւնեանց, Վ. Վարշամեանց, Մ. Ստեփանեանց

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 24 դեկտեմբերի

Ո՞վ չէ իմանում, որ Թիֆլիսի ծխախոտի խանութներում հաւաքվում են ձմեռ ժամանակ երեկոները մի տեսակ դասակարգ կազմող անձինք մեր հասարակութեան։ Ծխախոտի խանութները այդ որոշ դասակարգի կլուբներն են.— իմ եղած ծխախոտի խանութում յաճախող երիտասարդներին առաջարկեցի, որ այս ամբողջ ձմեռվան ընթացքում պարտաւորվենք շաբաթական տասը կոպէկ վճարել յօգուտ Վանի սովատանջների, որոնք սիրով յանձն առան, ցանկացողները կարող են աւելի տալ։ Առ ժամանակ նուիրատուները հետեւեալ երիտասարդներն են։

Սմբատ Յովուեանց 10 կ., Գէորգ Շահվերդեանց 10 կ., Սիմէօն Սիմէօնեանց 20 կ., Լեոն Վարձելեանց 20 կ., Առաքել Ասլանեանց 10 կ., Վասօ Շահբուդաղեանց 10 կ., Յովհաննէս Մանվելեանց 20 կ., Վասօ Թայիրեանց 10 կ., Մկրտիչ Տէր-Սիմէօնեանց 10 կ., Սէրգուշկայ Բէգզանեանց 10 կ., Աղէքսանդր Արարատեանց 10 կ., Մ. Հասան-Զալալեանց 10 կ., Աղէքսանդր Գրաեսայեանց 10 կ., Ե. Ա. Օձնեցի 10 կ., Իշխան Սեխանեանց 10 կ., Գրիգոր Ակոբջանեանց 10 կ., Սարգիս Նունուփարեանց 10 կ., Տիգրան Ծատուրեանց 10 կ., Գիգօ Մարկոսեանց 10 կ., Զալինեանց 10 կ., Հրաչեայ 10 կ., Ա. Ամիրաղեանց 15 կ., Կ. Ծովհաննեանց 10 կ., Գ. Աստուածատուրեան 10 կ.։ Ընդամենը 2 ր. 75 կոպ., Վերոյգրեալները պարտաւորվում են ամենայն շաբաթ վճարել նոյնը, բացի մի քանիսից, որոնք պատահական նուիրատուներ են։ Ինչ ասել կուզէ, որ սովի վտանգի հետեւանքները աչքի առաջ ունենալով այս մտադրութիւնը իրագործեցինք—թող մեր հարուստները հետեւեն այս երիտասարդներին, որոնց համար գուցէ տասը կոպէկը աւելի մեծ փող է, քան մի հարուստի համար հարիւր կամ հազար բուբլի։

Սմբատ Հովուեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը այս 1880 թւի վերջին համարը կը լինի։ Եկող 1881 թւին «Մշակի» առաջին համարը կը հրատարակվի յունվարի 9-ին, կամ 10-ին։

—

Ցօն օրերին, քանի որ «Մշակը» չի հրատարակվի, մեր խմբագրատունը բաց կը լինի ամեն օր, առաւօտեան 11 ժամից, մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

—

Թէ Թիֆլիսցիները և թէ օտարաքաղաքացիները «Մշակին» գրվել կարող են ուղղակի դիմելով խմբագրութեանը։ Իսկ Թիֆլիսցիները, բացի սորանից, կարող են գրվել մեր լրագրին պ. Շավէրդօվի պավիլիօնի մէջ, որտեղ և ընդունվում են յայտարարութիւններ «Մշակի» համար։

—

Ստացանք պ. Ա. Վարդապետեանից 6 բուբլ յօգուտ «Միացեալ ընկերութեան» նոյն պարոնից 5 բուբլ յօգուտ Հայաստանի սովատանջների, նոյնպէս 1 ր., պ. Դօլուխանեանից և մի անյայտ պարոնից 3 ր. յօգուտ Վանի սովատանջների։

—

Եկող 1881 թւին կը հրատարակվի ԵՐԵՒԱՆՈՒՄ քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանի խմբագրութեամբ մի «Առողջապահական Թերթ» (մի ամսեայ հանդէս)։ Ամսագրի գինը կը լինի տարեկան 3 բուբլ։ Ներկայ համարում տպում ենք այդ ամսագրի յայտարարութիւնը։ Աջողութիւն ենք ցանկանում այդ օգտաւէտ ձեռնարկութեանը։

—

«Русскій Курьеръ» լրագրին հաղորդում են որ Ս. Պետերբուրգում կազմվեցաւ բարձրագոյն հաստատված մի յանձնաժողով, որ նպատակ ունի վերաքննել ռուսաց համալսարանների և բարձրագոյն դպրոցների կանոնադրութիւնը։ Ասում են որ ռուսաց համալսարանները կը կազմակերպվեն Հէլսինգֆորսի համալսարանի օրինակով, այն զանազանութեամբ որ թէև բոլոր կուրսերի ուսանողները իրաւունք կունենան մասնակցել ուսանողական խորհուրդներին համալսարանական ներքին խնդիրների վերաբերութեամբ, բայց առաջին կուրսի ուսանողները կունենան միմիայն խորհրդակցական ձայն այդ խորհրդների մէջ, իսկ մնացած կուրսերի ուսանողները վճռ-

---

երկու կնիկներ ունէր, իսկ այդ հասակում կամենում էր պսակվել մի դեռահաս, տասն և չորս տարեկան աղջկայ հետ, յոյս դնելով իր դէրվիշի հրաշալի մաջունի վրա, որը պէտք է վերադարձնէր նրա մանկութիւնը, և նրան մի առոյգ երիտասարդի սիրտ և ուժ պիտի տար։ Նա բոլորովին հաւատում էր իր վերածնելութեանը, թէև հրաշալի մաջունը նրան չատ թանգ պիտի նստէր, թէև բոլոր գոհարեղէնները պիտի մանէին խորամանկ դէրվիշի գրպանը, որը բժշկութեան մէջ իրան մի նոր Լոկման էր ներկայացնում։

—Այդ դէրվիշը, խօսեց իմամը,—սքանչելի բաներ գիտէ,նա խոստանում է ինձ համար մի դարման չինել, որը մի անգամ ընդունելուց յետոյ բոլոր սպիտակ մաղերը սև գոյն կը տանան։ Գիտէ և մի ուրիշ դարման, որ կեանքը հարիւրաւոր տարիներով երկարացնում է։

—Ի՞նչու չէք չինել տալիս, հարցրեց խանը։

—Նիւթերը հազուադիւտ են և ըստ մեծի մասին թանգագին։

—Այսպիսի դարմանները պատրաստվում են գլխաւորապէս գոհարեղէններից։

—Այո, գոհարեղէններից։

Խանը դարձեալ կրկնեց, թէ բոլորը իմամը կարող է ստանալ իրանից, և խնդրեց դէրվիշին իր մօտ ուղարկել, յայտնելով, թէ ինքն էլ նպատակ ունի նոյն մաջունները պատրաստել տալ իր համար, և այսպիսով մի օգուտ հասցրած կը լինի դէրվիշին, որը իմամի թէ բժիշկը և թէ հիւրն է։ Մի խօսքով, խանը աշխատում էր ամեն տեսակ հաճութիւն ցոյց տալ այդ սպիտակեղէնների մէջ փաթաթված, չորս ցամաք ծերուկին, որ բովանդակում էր իր մէջ ամբողջ ցեղի հաւատը և համակրութիւնը։ Խանը այնքան վարպետ էր, որ գիտէր, թէ այդ մարդուն գրաւելով, ամբողջ ժողովուրդը իր ձեռքում սանձահարված կարող էր պահել։

Մի մարդ միայն այդ վրանում իր մտքում ծիծաղում էր այդ բոլոր խօսակցութիւնների վրա, —դա մունշի-բաշին էր։ Նա խիստ դժգոհ էր, որ իմամի այցելութիւնը խանդարեց իր բացատրութիւնները հայերի հարստահարութեան մասին, և բարկութիւնից, հանեց իր ծոցից մի փոքրիկ ոսկեայ տուփ, և նրա միջից վեր առնելով ափիոնի երեք հատ խոշոր գնդակներ, դրեց բերանը, կուլ տուեց։

—Միրզայ-Ջաֆարը—այսպէս էր մունշի-բաշիի անունը,—արդէն կուլ տուեց իր մաջունը, նկատեց իմամը հեգնական եղանակով։

—Այո, պատասխանեց նոյնպէս հեգնական ոճով քարտուղարը,—այդ է իմ մաջունը, թէև չէ մանկացնում, բայց գոնէ մոռանալ է տալիս ինձ աշխարհի վշտերը...

—Մի՞թէ դուք էլ վշտեր ունէք, հարցրեց իմամը ծիծաղելով։

—Ես վշտեր չունեմ, բայց ուրիշի վշտերը նեղացնում են ինձ... ասաց նա փիլիսոփայական զուարճախօսութեամբ,—աշխարհի մէջ չատ չարու բարի եմ տեսնում... կան մարդիկ, որ ամեն հնարներ գործ են դնում իրանց կեանքը երկարացնելու համար, որ աւելի չատ վայելեն աշխարհի հեշտութիւնները... կան և այնպիսի մարդիկ, որոնք կամաւ կարճացնում են իրանց կեանքը և մահուան մէջ են որոնում հանգստութիւնը...

Թէ խանը և թէ իմամը առաջուց սովոր էին քարտուղարի տարապայման խօսակցութեանը, այս պատճառով չը բարկացան նրա բացարձակ ակնարկութիւնների վրա։ Դէրվիշները առհասարակ յարգանք ունեն պարսիկների մօտ, չը նայելով որ, նրանց հայացքները և սովորութիւնները չատ անդամ հակառակ են լինում ընդունված նախապաշարմունքներին։ Միրզա-Ջաֆարը նոյնպէս դէրվիշ էր։ Իր վերջին խօսքերով նա ակնարկում էր խեղճ հայերին, որ մի քանի բոպէ առաջ այրվեցան հրապարակի վրա։ Իմամը հասկանալով այդ, պատասխանեց նրան.

—Նրանք առանց այդ էլ պիտի այրվէին դրժոխքի կրակների մէջ. լաւ է, որ այս աշխարհում փորձեցին նախապատրաստվել դեհենի կրակների համար։

Քարտուղարը կամենում էր պատասխանել իմամին, բայց խանը նրան աչքով արաց, որ լռէ։ Մելիք Դաւիթը, որ բոլոր ժամանակը լուռ լսում էր, մտածեց օգուտ քաղել իմամի ներկայութիւնից և իր հաշիւը վերջացնել քարտուղարի հետ։ Բայց առիթ չէր գտնում։ Առիթը տուեց ինքը իմամը, որը գոհ մնալով իր նոր պատասխանով հայերի վերաբերութեամբ, դարձաւ դէպի մելիք Դաւիթը, հարցնելով.

—Այսպէս չէ՞, Բաղր բէկ։

—Իրաւ, այդպէս է, տէր, ասաց «ուրացողը» —բոլոր հայերը դժոխքի կրակի մէջ պիտի այրվին։ Աստուծոյ դրախտը միայն Մուհամմէդի ուղղափառների համար է։ Մի քանի բոպէ առաջ պարոն քարտուղարը ինձ մեղադրում էր, իբր թէ ես եմ եղել գլխաւոր պատճառը, որ այդ յիմար հայերը իրանց անձերը կրակին մատնեցին։ Իբր թէ ես նրանցից ծանր հարկեր եմ առել և նրանց զուակները վաճառել եմ։ Խոստովանվում եմ, որ այդ երկուսն էլ արել եմ ես աւելի յարգանք ընդունելու համար, քան թէ նախատինք։ Հարկերը ծանրացնելով, ես ծառայութիւն եմ արել խանի գանձարանին, իսկ «զաւուրների» զաւակները մահմեդականներին վաճառելով, ես աշխատել եմ բաղմացնել մեծ մարդարէի հաւատացեալների թիւը։—Դրանք են իմ արածները, եթէ մի որ և իցէ յանցանք էք գտնում դրանց մէջ, ահա իմ պարանոցը, կտրել տուեցէք։

—Այդ գործերի մէջ ոչ ոք ձեզ մեղադրելու իրաւունք չունի, ընդհակառակն, դուք պատուի և շնորհակալութեան էք արժանի, պատասխանեց իմամը ծանրութեամբ։—Դրանցով դուք ցոյց էք տալիս, որ անկեղծութեամբ և հաւատքով էք ընդունել մեր կրօնը։ Ես կը խնդրեմ խանից, որ ձեզ ըստ արժանւոյն վարձատրէ։

—Ես այսօր իմ սեպհական հանդերձատնից մի խալաթ կընծայեմ Բաղր բէկին, ասաց խանը իմամին գոհացնելու համար։

Մելիք Դաւիթը գլուխ տուեց և օրհնութիւններով յայտնեց իր շնորհակալութիւնը։ Այժմ չարադրծի մոռացված դէմքը կրկին սկսեց փայլել ուրախութիւնից։ Իմամը մելիք Ֆրանգիւլի վրա ամենևին ուշադրութիւն չը դարձրեց, թէև նա ատոիճանով աւելի բարձր էր մելիք Դաւիթից։ Մուսուլմանների բարձր հոգևորականը, կարծես, զզվում էր այդ «զաւուրի» ներկայութիւնից, մանաւանդ, որ նա համարձակվել էր նստել նոյն վրանի տակ, ուր ինքն էր նստած։ Այդ արհամարհանքը սաստիկ ազդեց փառասէր մելիք Ֆրանգիւլի սրտին և նրա պլսում կրկին ծագեց այն միտքը, որ երկար ժամանակ տանջում էր նրան...

Իմամը վեր կացաւ, յայտնելով, թէ երկար նստել չէ կարող, թէ իր նամազի ժամանակը անցնում է, թէ նա մի քանի բոպէով միայն կամեցաւ անցնել խանի մօտ, նրա առողջութիւնից տեղեկութիւն ստանալու համար, թէև նա եկած էր գլխաւորապէս գոհարեղէնների համար, որ պահանջում էր նրանից դէրվիշը։ Թէ խանը և թէ բոլոր ներկայ դտնվողները կանգնեցին և բաւական տեղ, վրանից հեռու, ճանապարհ դրին իմամին։

Իմամի գնալուց յետոյ խանը երկու մելիքների հետ մնաց միայնակ։ Քարտուղարը խռովված մարդու նման առանձնացաւ վրանի միւս մասնում, ուր նստած էին նրա ատորագրեալ գրագրները և սկսեց զբաղվել իր գործերով։ Այդ միջոցին խանը կանչել տուեց իր մօտ ձիաւորների գլխաւորին, որին կոչում էին զուլլար-աղասի և հրամայեց նրան պատրաստել երկու հարիւր զինված ձիաւորներ Թորոս Իշխանին ընդունելու համար։

—Թորոսը, հարցրեց մելիք Ֆրանգիւլը զարմացած կերպով, իբր թէ ոչինչ բանից տեղեկութիւն չունի,—ինչու համար է գալիս Թորոսը։

—Իշխանը պիտի գայ մեզ մօտ դանված հայ գերիներին գնելու համար, պատասխանեց խանը։—Այսօր, ճաշից երկու ժամ առաջ, ժամանակ ենք նշանակել նրան ընդունելու։

—Ներեցէք համարձակութեանս հարցնել՝—որքան փրկանք էք նշանակել։

—Ես դեռ ոչինչ չեմ նշանակել, տեսնենք իշխանը որքան կը տայ։ Ի հարկէ, փոքր մասին սակարկութիւն կը լինի։

—Ես հէնց այդ էլ ուզում գիտենալ, ասաց մելիք Ֆրանգիւլը խոհեմ կերպով։—Թորոսը հօթեն սատանայից աւելի խորամանկ է, վախենում էի, որ այդ անիրաւը ձեզ կը խաբէ։ Լաւ է, որ դեռ գործը վերջացած չէ, ես այժմ կարող եմ ձեզ մի քանի օգտաւէտ խրատներ տալ։

Սալամ մանկլաւիկը, որ ներքինապետից պատուէր էր ստացել լրտեսել խանի և երկու մելիքների խօսակցութիւնը, աւելի սրեց իր ականջները մելիք Ֆրանգիւլի «խրատները» լսելու համար։ Ընդունելով իր մատուցած ղեյլանը խանի ձեռքից, նա մի կողմ քաշվեցաւ, կանգնեց վրանի մուտքի մօտ, և լարված ուշադրութեամբ լսում էր նրանց։

Մելիք Ֆրանգիւլը խանի ուշադրութիւնը դարձրեց նախ այն կէտի վրա, թէ ովքեր են գերիները, ինչ տոհմից են, որքան կարողութիւն ունեն և նրանց ազգականները ինչ գումար կա-

ռողական ձայն։ Ցանձնաժողովի անդամները սըրանք են. կոմս Լորիս-Մելիքով, Սաբուրով, Աբազա, Պոսիէտ և իշխան Լիվեն։

—

Վերջին տեղեկութիւններին համեմատ ամբողջ Ռուսաստանում հրատարակվում են 483 պարբերական հրատարակութիւններ, որոնցից ռուսաց լեզուով 376 հատ, լեհական լեզուով 54, գերմաներէն 31, լատիներէն 10 հատ, ֆրանսերէն 8, հայերէն 6, էստոներէն 6, հրէաերէն 4, վրացերէն 3, ֆիններէն 2 և լատիներէն 1 հատ։

—

Ս. Պետերբուրգում հրատարակվող կիսապաշտօնական «Берегъ» լրագիրը, որի խմբագիրը պ. Ցիտովիչն է, յայտնում է որ եկող 1881 թուից սկսած այլ ևս չի հրատարակվի։

—

Ստացանք ՇՈՒՇՈՒՅ պ. Հ. Առաքելեանցից 16 ռուբլ յօգուտ Վանի սովեալների հետևեալ նուիրատուներից. պ. Մարգարեան 10 ռուբլ, Տիգրան Նազարեան և օրիորդ Ս. Ղուկասեան 6 ռուբլ։

## ԸՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներկայ 1880 թուականի ընթացքում թէպէտ եւրոպական կեանքը չը վրդովվեցաւ արիւնահեղ պատերազմով, որին շատերը սպասում էին, բայց այնու ամենայնիւ եւրոպական դիպլոմատիան բաւական լարված դրութեան մէջ էր։

Ամենախրճրճված հարցը, որ զբաղեցնում էր եւրոպական կառավարութիւններին, արևելեան հարցն էր։ Հարկաւոր էր իրագործել Բերլինի դաշնագիրը և դրա համար Գերմանիայի մայրաքաղաքի մէջ հաւաքվեցաւ մի կոնֆերենցիա պետութիւնների ներկայացուցիչներից, որոնք վճիռներ կայացրին վիճելի երեք հարցերի վերաբերող էին վճարել նրանց գնելու համար։ Բոլորի անունները մի առ մի յայտնելուց յետոյ, նա աւելացրեց, թէ ինքը, կռիւի ժամանակ, որովհետև խանի զօրքերի մէջն էր գտնվում, և խանին աւելի չահ հասցնելու մտքով, աշխատեց ընտրել գերիներին ամենահարուստ ընտանիքներից, որպէս զի, նրանց ազատելու համար կարելի լինի պահանջել նշանաւոր գումարներ։ Գերիները թուով հարիւր քսան և հինգ հոգի են. մի մասը մեռել են բանտի մէջ, բայց հարիւրի չափ դեռ մնում են։ Դրանց մէջն է գտնվում Ստեփաննոս պատանին, որ Շահումեան իշխանների տոհմիցն է, մէլիք Վարթանէսի որդին, ամբողջ Գենուազ գաւառի ժառանգը, այն գաւառի, որ զուք տիրեցիք, որ այժմ ձեր իշխանութեան ներքոյ է գտնվում։ Այդ պատանուն ամենեին պէտք չէ ձեռքից թողնել, եթէ կամենում էք, որ Գենուազը մնայ ձեզ որպէս մշտական սեպհականութիւն։ «Վիշապի ձագը երբ որ մեծանայ, դարձեալ օձերի թագաւորը կը դառնայ»—այդ պարսկական առածի միտքը զուք լաւ էք հասկանում։ Ուրեմն, պէտք է Շահումեանների տան այդ վերջին շառաւիղը արմատից կորել, այդ տոհմի հետքը աշխարհի երեսից ջնջել, եթէ ցանկանում էք, որ Գենուազը ձեզ մնայ։ Իսկ եթէ պատանու կեանքին դիպչել չէք ցանկանայ, խոհեմութիւնը պահանջում է, որ նրան պահէք ձեզ մօտ որպէս պատանդ։

Մէլիք Ֆրանգիւլը այնպէս հասարակ և սովորական կերպով առաջարկում էր խանին իր «խրատները», որպէս բժիշկը տալիս է իր հիւանդին զանազան առողջապահական խորհուրդներ, որոնց մէջ նա խղճի, պատուի և աղնուութեան դէմ ոչ մի յանցանք չէ գտնում։

—Այդ բոլորը, ինչ որ ասեցիք, շատ խելացի են, պատասխանեց խանը ուշադրութեամբ լսելուց յետոյ.—բայց ես այդ պատանուն ոչ կարող եմ պահել ինձ մօտ որպէս պատանդ և ոչ ոչնչացնել նրան, որովհետև Թորոս իշխանին խօսք եմ տուել բոլոր գերիները դարձնել նրան, և ես իմ խօսքը յարգում եմ։

Կարծես մէլիք Ֆրանգիւլի գլխին սառը ջուր ածեցին։ Նա չէր սպասում խանից մի այսպիսի պատասխան։ Բայց դարձեալ իր վստահութիւնը չը կորցնելով, դաւաճանը շարունակեց.

—Ես երբէք չէի ցանկանայ, որ զուք ձեր խօսքը կոտրէիք, խան, բայց այդ չէ արգելում ձեզ պահանջել որպէս պատանու, նոյնպէս և միւս գերիների համար արժանաւոր փրկանք։

Մէլիքի նպատակը այն էր, որ խանը պահանջէ այնպիսի ահագին գումար, որ Թորոս իշխանը չը կարողանայ վճարել. դրանով դարձեալ գերիները կը մնային խանի բանտի մէջ, այնտեղ կը մաշվէին, կը տրորվէին և վերջապէս կոչնչանային,—այն ժամանակ մէլիքը դարձեալ հասած կը լինէր իր նպատակին։ Բայց ինչ սատանայական նպատակ էր այդ,—պէտք է պարզել։

Մէլիք Ֆրանգիւլը վաղուց դիտաւորութիւն ունէր Գենուազ գաւառի մէլիքութիւնը իր ձեռքը ձգել։ Այս նպատակով, նա իրան աջակից ընտրելով տաթեացի Դաւիթ ուրացողին, երկուսը միասին կարողացան խանին գրգռել Գենուազի վաղեմի իշխան մէլիք Վարթանէսի դէմ։ Դաւաղրութիւնը այնպէս սարքեցին, որ մէլիք Վարթանէսը բոլորովին անպատրաստ, խանի հրոսակները յանկարծ մտան նրա երկիրը։ Շահումեանների տունը բոլորովին բնաջինջ եղաւ, ինքը մէլիք Վարթանէսը ընկաւ կռիւի մէջ։ Այդ ահագին իշխանական տոհմից ազատվեցաւ մի պատանի միայն, Ստեփաննոսը, որը գերի ընկաւ խանի զօրքերի ձեռքը։ Նրա հետ գերի առնվեցան Գենուազի գիւղերի բոլոր նշանաւոր տանուտէրների որդիները։ Այնուհետև խանը իր կողմից նշանակեց այդ գաւառում պարսիկ կառավարիչներ։ Գերիները այնքան ժամանակ պահվում էին խանի բանտերում, մինչև Գենուազը բոլորովին հպատակեր և ժողովուրդը ապստամբական փորձեր չանէր։ Բայց որովհետև ժողովրդի գլխաւորները ոչնչացրած էին, և նրանց զաւակները որպէս զբաւական պահվում էին տիրող բռնակալի ձեռքում, այս պատճառով անտէր, անառաջնորդ Գենուազը շուտով խոնարհվեցաւ պարսիկ խանի իշխանութեան ներքոյ։ Այնուհետև աւելորդ էր պահել գերիներին, երբ կարելի էր ստանալ նրանց փոխարէն բաւական մեծ գումար։ Բայց մէլիք Ֆրանգիւլին այդ ձեռնտու չէր։ Նա ժառանգական թշնամութիւն ունէր Շահումեանների տոհմի հետ։ Նա ցանկանում էր ոչնչացնել այդ հոյակապ ընտանիքից մնացած միակ ներկայացուցիչը, Ստեփաննոսին, որը ինքը լինի Գենուազի տէրը։ Թէև այդ մասին նա դեռ ոչինչ խօսեցած չէր խանի հետ, բայց մեծ յոյս ունէր, որ կարող է հասնել իր նպատակին, որովհետև խանը նրա օգնութեամբ, նրա առաջնորդութեամբ միայն կարողացաւ տիրել Գենուազին և յաղթել մէլիք Վարթանէսի նման մարդուն, որը մեծ զօրութեան տէր էր։ Պարսից խաները սովորութիւն չունէին իրանք կառավարելու հայոց գաւառները. նրանք յանձնում էին հայ մէլիքներին և տարեկան մի նշանակեալ հարկ էին ստանում։ Ո՞վ աւելի արժան էր այդ պաշտօնին, քան մէլիք Ֆրանգիւլը, որ այնքան հաւատարիմ էր խանին, որ այնքան օգնել էր նրան Գենուազի տիրապետութեան մէջ։

Մէլիք Ֆրանգիւլը երկար ժամանակ աշխատում էր պատանի Ստեփաննոսին խեղդել տալ բանտի մէջ, բայց այդ փորձը, ինչպէս տեսանք, չը յաջողվեցաւ։ Նա այնքան երկիւղ չէր կրի այդ պատանուց, եթէ նա չունենար մի այնպիսի հզօր քեռի, որպիսին էր Թորոս իշխանը, Զանգուրի ամբողջ գաւառի տէրը։ Ստեփաննոսի մայրը այդ իշխանի հարազատ քոյրն էր։—Տարակոյս չը կայ, մտածում էր մէլիք Ֆրանգիւլը, որ Թորոս իշխանը, ազատելով իր քրոջ որդուն, կը պահէր իր մօտ, կը մեծացնէր, և վերջը կաշխատէր նրան կրկին իր հայրենական ժառանգութեան տէր դարձնել։

Արծաթի սէրը խանի մէջ մեծ էր ամեն բանից։ Մէլիք Ֆրանգիւլի բոլոր խորհուրդները, բոլոր փաստերը, թէ գերիներին իր մօտ պահելով կամ ոչնչացնելով, կարող էր նա ապահովացնել Գենուազի տիրապետութիւնը,—այդ «խրատներին» խանը մեծ նշանակութիւն չը տուեց։ Նրան միայն գրաւեց փողի խնդիրը և այս պատճառով հարցրեց, թէ ինչքան կարելի է պահանջել Թորոս իշխանից։

—Մէլիք Վարթանէսի ամբողջ գանձը, պատասխանեց մատնիչը։

Խանը զարմացաւ, ասելով, թէ մէլիք Վարթանէսը ինչ որ ունէր, ինչ որ չունէր, բոլորը կողոպտվեցաւ կռիւի ժամանակ. մինթէ դեռ ևս նրանից մի բան մնացած է։

—Ինչպէս չէ, պատասխանեց մէլիքը ժպտելով, որպէս մի մարդ, որ ժպտում է երեխայի միամտութեան վրա։—Մէլիք Վարթանէսը դեռ կռիւից չատ առաջ հոտը առել էր, որ ձեր զօրքերը պիտի մտնեն նրա երկիրը. այս պատճառով իր գանձը նախապէս տեղափոխել էր իր աներոջ՝ Թորոս իշխանի ամրոցը։ Ձեր զօրքերը գտան մէլիք Վարթանէսի ամրոցում նրա հարստութեան փշրանքները միայն։

Ցետոյ նա սկսեց պատմել այդ առասպելական գանձի մասին շատ բան. թէ մէլիքը իր ամրոցում մի ներքնատուն ունէր երկաթէ դռներով, թէ այնտեղ յատակի վրա, ցորենի չեղջերի նման, դիզված էին՝ մի կողմում ոսկի, միւս կողմում արծաթ, մի տեղ պղնձէ դրամներ, միւս տեղ թանգագին քարեր։ Թէ այդ կոյտերը այնքան բարձր էին, որ եթէ մի մարդ միւս կողմում կանգնած լինէր, անկարելի էր նրան տեսնել։ Եւ փողը այնտեղ չէին համարում, կամ կշռում էին կշիռքով, կամ չափում էին սամարով։ Այդ բոլորը նա ուղտի բեռներով առաջուց ուղարկած էր Թորոս իշխանի տունը։

Այդ պատմութիւնը խանի վրա նոյն ազդեցութիւնն էր գործում, ինչպէս քաղցած մարդու մօտ համեղ կերակուրների պատմութիւնը։ Նրա ախորժակը աւելի բացվեցաւ, և ինչպէս ասում են՝ «բերնի ջուրը գնաց», երբ մէլիք Դաւիթը, որ բոլոր ժամանակը լուռ էր, վկայութիւն տուեց, թէ բոլորը ճշմարիտ է, թէ ինքը իր աչքովն է տեսել այդ ահագին գանձը, թէ այնտեղ կային սկսեալ Սըկանդար Զուլկարնէյնից (Աղեքսանդր Մակեդոնացուց) ամեն ժամանակների դրամներ, թէ այնտեղ կային մինչև անգամ քաջքերի դրամներ։

Այդ միջոցին հեռուից լսելի եղաւ փողի ձայն, որի զողջոյնն հնչիւնները կոտրատվելով տարածվեցան լեռների մէջ։ Մի քանի անգամ կրկնվեցաւ ձայնը, յետոյ լռեց։

—Իշխանը գալիս է, ասաց խանը և հրամայեց ֆարրաշ-բաշուն, իր դրանիկներից գլխաւորների հետ ընդ առաջ գնալ։

Երկու մէլիքները կանգնեցան, յայտնելով, թէ իրանց անյարմար է նրա գալուց յետոյ ներկայ գտնվել։

—Շնորհակալ եմ, «իմ» մէլիքներ, ասաց խանը բարեկամաբար,—շատ շնորհակալ եմ, որ զուք այդ բոլորը նախապէս յայտնեցիք ինձ։ Ես պատանի Ստեփանին չեմ տայ, մինչև չը ստանամ նրա հօր ամբողջ գանձը, և միւս գերիներին նոյնպէս չեմ ազատի, մինչև չը ստանամ արժանաւոր փրկանք։ Ես չեմ մոռանայ, որ զուք իմ աչքերս բաց արեցիք...

(Կը շարունակվի)

---

Ֆրանսիական հանրապետութիւնը հետզհետէ զօրանում է, չը նայելով նրա թշնամիների աշխատանքներին։ Հոդևոր միաբանութիւնների դէմ ուղղված օրէնքները ազգային ժողովների հաւանութիւնը ստանալուց յետոյ իրագործվեցան կառավարութիւնից։ Ֆրանսիան իր զօրքերին նոր դրօշակներ բաժանեց և այդ հանդէսի ժամանակ երևաց, որ Ֆրանսիայի պատերազմական ոյժերը վերակազմված են վերջին պատերազմի ջարդից յետոյ։ Ֆրանսիայի ֆինանսների դրութիւնը միւս բոլոր պետութիւններից աւելի լաւ է և դրա պատճառն այն է, որ ֆրանսիացիք հաւատում են իրանց կառավարութեան խաղաղասիրական քաղաքականութեանը, որ և ապացուցվեցաւ վերջին ժամանակներում։ Ֆրանսիայի ունեցած արտաքին յարաբերութիւնների ժամանակ։ Բացի այդ ֆրանսիական պատգամաւորների ժողովը, վերջացնելով իր ներկայ տարվայ նիստերը, ձայների ահագին մեծամասնութեամբ ընդունեց պարտադիր ուսման օրինագիծը, որի համեմատ ծնողները պարտաւորվում են իրանց երեխաներին ուսում տալ մինչ 13 տարեկան հասակը։ Այդ կրթութիւնը բուն ազգային ուղղութիւն կունենայ և ազատ կը լինի կղերականների ազդեցութենից։

Աւստրօ-Ունգարիայի մէջ շարունակվում են կուսակցական կռիւներ և ներկայ տարվայ ընթացքում այդ երկիրը բնակեցնող զանազան ազգութիւններից ամենից շատ շահվեցան լեհացիները։ Աւստրօ-Ունգարիան մի դաշնակցութիւն կապեց Գերմանիայի հետ, որ մինչև այժմ հաստատ է մնում և ապագայում կարող է կուսակիցներ ունենալ։

Գերմանիան շարունակ պահում է իր առաջնակարգ դիրքը եւրոպական պետութիւնների շարքում, որ նա ստացաւ Ֆրանսա-գերմանական պատերազմից յետոյ։ Կառավարվելով իշխան Բիսմարկից, գերմանական ազգային ժողովը անդադար օրէնքներ է հրատարակում սոցիալիստների դէմ։ Գիտութեան այդ մայրաքաղաքի մէջ ներկայ տարվայ վերջերում հալածանքներ սկսվեցան հրէաների դէմ և այդ հալածանքների նշանաբանը համալսարանական ամբիոնից տրվեցաւ։ Հրէաների դէմ հալածանքները մինչև այժմ շարունակվում են և կառավարութիւնն էլ համամիտ է հալածողներին, ինչպէս այդ երևում է գերմանական կառավարութեան պաշտօնական լրագիրների մէջ տպված յօդուածներից։

Իտալիան ներկայ տարին գլխաւորապէս զբաղված էր իր ներքին գործերը կարգի բերելով և մասնակցում էր քաղաքական գործերին եւրոպական համաձայնութիւնը պահպանելու համար։

Ռուսաստանի կեանքը 1880 թուի սկիզբներին չափազանց ծանր էր և ռուս հասարակութիւնը վրդովված դրութեան մէջ էր։ Չարագործները անդադար յանցաւոր փորձեր էին անում կառավարչական ներկայ կազմակերպութեան դէմ, որոնք բաղդաւորապէս անաջողութեամբ էին անցնում։ Վերջին ժամանակներում կառավարութիւնը առաջն առաւ այդ բոլոր անկարգութիւնների և սկսեց շարունակել թագաւոր Կայսրի վաղուց բռնած վերանորոգական ընթացքը։

Պէտք է նկատել վերջապէս, որ ներկայ տարվայ ընթացքում եւրոպական բոլոր կառավարութիւնները յայտնում էին, որ նրանց համար անհրաժեշտ է խաղաղու-

թեան պահպանելը և մի և նոյն ժամանակը ուժեղացնում էին իրանց պատերազմական մինիստրութեան բիւդժետը, որ իւրաքանչիւր պետութեան մէջ աւելի շատ դրամ է կլանում, քան թէ միւս մինիստրութիւնների բիւդժեաները առանձին առանձին։ Ամբողջ տարվայ ընթացքում, երբ մի երկրի կառավարութիւնը նոր դրամ էր պահանջում զինուորական ծախսերի համար, նա անհրաժեշտ էր համարում հաւատացնել, որ այդ ծախսերը հարկաւոր են խաղաղութիւնը պահպանելու համար։ Այժմ Եւրոպան մի մեծ զօրատուն է կազմում։

## „DAILY-NEWS“ ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

„Հայաստանի վիճակը“ վերնագրով „Daily-News“ այսպէս է գրում։ Սիվասից եկած մէկ նամակ հաղորդում է որ, այդ քաղաքում Ալէքսանդր անունով մի հայ սպանեցին երկու օր նրա աղջկայ հարսանիքից առաջ։ Հայաստանում սովորութիւն է հիւրերին հարսանիքից մի քանի օր առաջ հրաւիրել, և այդ պատճառով էլ երբ սպանումը տեղի ունեցաւ՝ բաւական մարդիկ կային հաւաքված տան մէջ։ Այդ տխուր լուրն առնելով նրանք բոլոր հասարակութեան ընկերակցութեամբ դիմեցին Վալիին և պահանջեցին միւսիւլման մարդասպանի պատիժը։ Շատ յուզված լինելով՝ յարձակվեցաւ դրսի ժողովուրդը Վալիի ապարանքի վրա և փշրեց պատուհանները։ Վալին կանչեց իր զօրքը, որ հազիւ հազ կարողացաւ ցրել ամբոխին։ Այդ պատճառով յիսունի չափ անձինք են կալանաւորված, իբր թէ սուլթանի դերիշխանութեան դէմ ապստամբվել են։

Վանի մօտ Նօրդուզ գիւղի վրա քիւրդերը յարձակվում և հայերի անասունները քշում տանում են։ Երբոր նրանք գիմում են կուսակալին, ասում է թէ նա կարողութիւն չունի քիւրդերին բռնելու կամ նրանց պատժելու։ Գիւղի մէջ Նարոյ անունով մի իշխան՝ մի քաջ հայ պատասխանում է, „հիմա որ դուք միջոց չունէք մեզ քիւրդերից պաշտպանելու, մենք ինքներս պէտք է մեզ պաշտպանենք“։ Յետոյ նա գինում է Նօրդուզի բնակիչներին և նրանց առաջնորդում քիւրդերի դէմ։ Դրանք հասնում են քիւրդերի վրա այն ժամանակ, երբ նրանք իրանց աւարը բաժանելիս են լինում։ Տեղի է ունենում մի լաւ կռիւ, որի մէջ քիւրդերից վեցը սպանվում և շատերը վիրաւորվում են։ Յետոյ քիւրդերը իրանց գողացած բոլոր անասունները ձգելով փախչում են։

Նոյն լրագիրը „Մի հայերէն լրագրի դադարումը“ վերնագրով այս է հաղորդում։ Մենք լուր առինք, որ Կ. Պոլսում տպվող հայերէն լրագիրը „Մասիս“ մէկ ամիս միջոցով դադարել է, որովհետև քիւրդերի դէմ մի յօդուած է հրատարակել։ „Մասիս“ մի պարկերէն Թերթից մէկ լուր քաղելով թէ քիւրդերը Մարաղայի մօտ (Պարսկաստանում) հազար հայ ընտանիք են կոտորել, լուսաբանում է այդ լուրը ասելով թէ քիւրդերը վայրագ և արիւնարբու են, և ասում է որ կառավարութիւնը պէտք է նրանց դէմ զօրեղ միջոցներ գործադրէ։

Կարծում են որ Բարձր. Դուռը ուզում է տաճիկների սիրտը շահել քիւրդերին էլ այնպէս հայերի դէմ գործածելով, ինչպէս ալբանցիներին չերնագօրցոց դէմ գործածեց։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 25 դեկտեմբերի։ Պարլամենտը բացվեցաւ դահլիան ճառով, որ կարդաց լորդ Սելիսբուրին։ Լորդերի ժողովի մէջ քիչ անդամներ կային, իսկ համայնքների ժողովի մէջ շատ պատգամաւորներ։ Ճառի մէջ ասված է, որ եւրոպական համաձայնութիւնը խանգարված չէ։ Կառավարութիւնը բանակցում է պետութիւնների հետ յունական հարցը խաղաղութեամբ լուծելու մասին և յոյս ունի, որ նրանք կաջողվին։ Կառավարութիւնը յոյս ունի խաղաղական համաձայնութեամբ վերջացնել պատերազմը բասուանների հետ։ Դիտաւորութիւն չը կայ երկար ժամանակ զրաւել Լանդահարը։ Արդարադրութիւններ են արված բրիտանական հեղինակութիւնը Տրանսվաալի մէջ շուտով վերականգնելու համար։ Իրլանդիայի վերաբերութեամբ կառավարութիւնը լրացուցիչ իրաւունքներ կը պահանջի կարգը վերականգնելու և բնակիչների կեանքը, սեփականութիւնը և անձնական ազատութիւնը պաշտպանելու համար։ Կառավարութիւնը խոստանում է բացի 1870 թ. կալուածական օրէնքի ընդարձակ գործադրելը, մի օրէնք առաջարկել՝ իրլանդական կոմսութիւնների մէջ անգլիականների նման տեղական ավտոնոմիա մտցնելու վերաբերութեամբ։ Ֆօքստեր յայտնեց համայնքների ժողովին, որ նա ժողովին բիլ կառաջարկի կեանքը և սեպհականութիւնը աւելի լաւ ապահովելու համար իրլանդիայի մէջ, զէնք կրելու մասին և հասարակական հանգստութիւնը պահպանելու համար։ Պարնել յայտնեց, որ նա կընդդիմանայ այդ բիլերի առաջարկութեանը։ Գլադստոն յայտնեց, որ երկուշաբթվանից նա անդադար կը պահանջի յիշեալ բիլերի առաջարկութիւնը, մինչև որ ժողովը նրանց վերջնականապէս կը քննի։

ԱԹԷՆՔ, 26 դեկտեմբերի։ Անգլիական դեսպանը յայտնեց կոմունդուրոսին, որ Անգլիան միացաւ պետութիւնների առաջարկութեան հետ յունական խնդիրը միջնորդ դատարանի օգնութեամբ լուծելու մասին և խորհուրդ է տալիս Յունաստանին ընդունել այդ առաջարկութիւնը։ Թագաւորի հետ խորհրդակցելուց յետոյ Կոմունդուրոս մինիստրների խորհուրդ կազմեց, որ երեք ժամ տևեց։

ԲԵՐԼԻՆ, 27 դեկտեմբերի։ Այսօր վերադարձաւ իշխան Բիսմարկ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 դեկտեմբերի։ „Голосъ“ լրագրին հեռագրում են Կ. Պոլսից. Ֆրանսիայի և Աւստրիայի պահանջների պատճառով Բ. Դուռը ազատեց միրիդիտների իշխան Պրենկօին։ „Молва“ լրագիրը լսել է. գիտութիւնների ակադեմիայի նախագահ կոմս Լիտկէ պաշտօնապէս դժգոհութիւն յայտնեց ակադեմիայի երկու ռուս անդամներին, որովհետև նրանք բողոքեցին շվեդացի Բակլունդին դօքտոր ընտրելու դէմ։ Այսօր գործարանատէր Նօբել մեծ բանկետ է տալիս ի պատիւ Նօրդենշելդի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Ն. ՏԷՐ-ՂԱՆԴԱՆԸ խնդրում է մեզ տպագրել հետևեալը.

"Մայրենի լեզուի" վերջին—ութերորդ տպագրութեան 33-երորդ երեսում մի խոշոր զանցառութիւն է մտել՝ Լուսացաւ վերնագրով ժողովրդական բանաստեղծութեան միայն առաջին, երկրորդ և չորրորդ տողերն են շարուել, փոխանակ ամբողջի։ Խնդրում եմ այդ գիրքը գործածող ուսուցիչներին ի նկատի ունենալ այս և աշակերտներին սովորեցնել ամբողջ բանաստեղծութիւնը, որը հազիւ թէ նոցանից մէկին անծանօթ լինի, և ոչ թէ միայն յիշեալ երեք տողը"։

Անգլիական խանութի մէջ ծախվում են ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, որոնցով մի անգամից կարելի է 20 ԱՒԱԶԱԿ ՍՊԱՆԵԼ, իւրաքանչիւր աւազակ 1 ր. 50 կ.։ Մի և նոյն տեղը ամեն տեսակ անգլիական զէնք միւս տեղերից 30% էժան։ Արծրունու գալերէյ։ 1—12

Ամբողջ հագուստ կամ պալտո 15 ր., բէվօլվերներ 4 ր. և աւելի թանգ, կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը, խինայի գինի և փոշի ջերմի դէմ 1 ր. 50 կ., խերես, պօրտվէյն 1 ր. 20 կ., կօնեակ շիշը 2 ր.։ Բացի այդ Անգլիական խանութի մէջ ստացված է թէյ մեծ քանակութեամբ։ 4—12

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Բաց անելով իր բոլոր արդիւնաբերութիւնների պահեստը միջի փողոցի վրա Աժեվեռնայա կարգում Բարթվելովի տանը, պատիւ ունի առաջարկել պ. պ. առևտրականներին և գործածողներին ամեն տեսակ պաղաշի, ձիու, իւֆտի և օպօյկի ապրանքներ, նոյնպէս և վիտեաժկաներ, գալոշներ, սիրոմեատների կաշիներ, թամբի և մեքենաների բէմենները։ Ծախվում են գործարանի գներով։ 9—20

Ամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են կենտրոնական գրավաճառանոցում։

Ն. Տէր Ղևոնդեան Մայրենի լեզուի ա. տ. 8-դ տպագրութիւնը գ. 35 կ.։

Ս. Ա. Ռ. Տէր-Ստեփանեանցի Սկզբունք Քրիստոնէական հաւատոյ դասագրքի երկրորդ տպագրութիւնը 50 կոպ.։

Ամուլի տակ է և շուտով լոյս տեսնէ Ս. Մանդինեանցի Թուաբանական խնդիրների ա. մ.

Այսու պատիւ ունեմ ՅԱՅՏՆԵԼ ՏՓԽԻՍԻ հասարակութեան, որ մօտ օրերս մատդիր եմ ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՈՒ մեծ Բազազխանայի մէջ գտնուած երկու աչք կրպակները № 33 իրանց նկուղով և վերնասենեակով և իւր շրջակայ շկաֆներով, որոնք պատկանում են Մողնուոյ սուրբ Գէորգ եկեղեցոյն։ Ցանկացողները կարող են դիմել ինձ մօտ ԱՈՒՐԲ ԳԷՈՐԳԵՆԵՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆԴ ամեն օր 9 ժամից առաւօտեան մինչև 10 ժամն և իմանալ պայմանները։

Նրբեպիսկոպոս Մողնուոյ սուրբ Գէորգ եկեղեցոյ Ն. Խոսրովեանց 4—7

ԱՄԵՆԱՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅ 1 ր. 20 կ. մինչ 2 ր. ֆունտը ամենալաւը, ստացված է անգլիական խանութի մէջ։ Նոյն տեղը ստացված են մեծ քանակութեամբ դեղին մահճակալներ և ուրիշ ապրանքներ։ 10—10

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### ԹԵՐԹ

ՄԻ ԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

(1—2 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ)

Կը հրատարակվի 1881 թուից Երևանում աշխատակցութեամբ պ. պ. բժիշկների՝ Արաէմ Իվանիչ Յովհաննիսեան, Աւետիք Բաբայեան, Գրիգոր Տէր-Գրիգորեան, Մարտիրոս Քալանթարեան, Արմենակ Շահազիզեան, Քոչարեան, Բագրատ Նաւասարդեան, և հետևեալ ծրագրով՝

I Պետական կարգադրութիւնները ժողովրդի առողջութեան վերաբերութեամբ.
II Առողջապահական յօդուածներ աշխարհիկ ոճով. ժողովրդի առողջապահական պայմանները. բժշկական արհեստը ժողովրդի մէջ. բժշկականութիւնը ժողովրդականացրած.
III Բժշկական մատենախօսութիւն.
IV Խառն լուրեր. Յայտարարութիւններ.

Տարեկան գինն է 3 մանէթ կանխիկ վճարելի

Խմբագիր հրատարակիչ
Երևանայ քաղաքային բժիշկ
ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

Օնդեան տներին երեխանց նուիրելու համար կենտրոնական գրավաճառանոցում ի միջի այլոց վաճառվում են հետևեալ գրքերը.—

| | |
|---|---|
| Ռնարիկ Հայկական Մ. Միանսարեանցի գ. | 1 ր. 30 կ. |
| փառակազմ. | 2 „ 30 „ |
| Ռնարիկ մանկական Աղէքս. Աբարատեանցի գ. | — „ 40 „ |
| Մուզայք Հայաստանի երգարան. | — „ 50 „ |
| Թովմաս Եղբօր տնակը—պատկ. | — „ 5 „ |
| կազմ. | — „ 60 „ |
| Կարմիր լապտեր պատկ. | — „ 30 „ |
| կազմ. | — „ 50 „ |
| Թաւամազմեղու պատկ. ու կազմած | — „ 40 „ |
| Մանկական երգեր Գոմառ-Ռաթիբայի կազմ. | — „ 25 „ |
| Ուօբենզօն կռուզօէ լիակատ. թարգ. պատկ. | 1 „ 75 „ |
| Դօն-Ռիշօտ լամանշեցի | — „ 70 „ |
| Գէորգ Ուօլեստօն | — „ 60 „ |
| Ընտիր Հայկազուն պատկերազարդ կենսագրութիւններ | 2 „ 75 „ |
| Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ | 1 „ 25 „ |
| Ներսէր Կաղանդի Նշ. Պերպերեանցի | — „ 65 „ |

Նոյն տեղը վաճառվում են Ռ. և գաղղիերէն լեզուներով մանկական գրքեր, խաղալիքներ, հասակաւորների համար վիպասանութիւններ և այլ գրքեր։

Дозволено цензурою, Тифлисъ, 29 декабря 1880 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.

233

ԿԿԵԼ ԵՒ
ԵՐԱՄԱՍ-

35 կ.։
ՍԿԳ-
ԱՍՈՅ
ՍԸ
ՄԵՍ
ԱՆ Ա-

ԴՆԵԼ
Ս օրերս
Ի ՄԵԾ
ՈՒ Ա Ծ
ԻՐԱՆՑ
ՈՎ ԵՒ
Ն պատ-
ՈՐԳ Ե-
ՆԻՆ դի-
ԵԱՆՆ
ԺամԻց
ՀՄԱՆալ

ԴՏՈՐԳ

7

20 կ.
ացվաՀ
Ն Նոյն
ԹԵամբ
Շ ապ-

0

ԿՆԵՐԻ՝
ՐՍԻՐՈՍ
ԵՒ ՀԵ-

ԹԵամբ.
ՀԱԿԱՆ
ԿԱՆԱՑ-

Ո Ր Օ-
ՐՔ-
30 կ.
30 „
40 „
50 „
5 „
60 „
30 „
50 „
40 „
25 „
75 „
70 „
60 „

75 „
25 „
65 „
„ խա-